

## Տ. ՇՆՈՐՀՔ ՔԱՀԱՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Արկադի)

Ծնվել է 1973 թ. ապրիլի 12-ին Հրազդան քաղաքում:

1980-1990 թթ. սովորել է տեղի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1992 թ. ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-աշխարհագրական ֆակուլտետի աշխարհագրության բաժինը:

1997-1998 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2002-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի, ձեռնադրվել է սարկավագ;

2005 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր: